

**Դեպի ապահով Հայաստան
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Սերժ Սարգսյան

2013թ.

Սիրելի՛ հայրենակիցներ,

Արդեն 22 տարի է՝ մենք ապրում ենք ազատ և անկախ Հայաստանի Հանրապետությունում: Հաշվի առնելով պատմության դասերը՝ ինքներս ենք կերտում մեր ներկան՝ նախանշելով ապագայի մեր ուղին: Անկախության մեր անցած ճանապարհը դյուրին չի եղել, այն կոփել է մեզ, դարձրել ավելի ամուր ու ավելի փորձառու:

Անշուշտ, այլևս անընդունելի է բացթողումներն ու երկրի հիմնահարցերն անցյալից ժառանգած արատավոր երևույթներով և մեր պետության երիտասարդ տարիքով պայմանավորելը: Հայկական պետությունն արդեն թևակոխել է հասունության փուլ, իսկ առկա լուրջ խնդիրներն օր առաջ գրագետ և հստակ լուծումներ են պահանջում: Նախորդ 5 տարիների ընթացքում մենք բազմաթիվ ներքին ու արտաքին մարտահրավերների ենք դիմակայել, հաստատական առաջ ենք շարժվել, հավատացել ու փոխում ենք՝ ջանք չխնայելով կառուցելու ավելի բարվոք Հայաստան՝ բոլորի և յուրաքանչյուրի համար:

Կասկածից վեր է, որ ամեն հայի սիրտ ցավում է Հայաստանի համար: Յուրաքանչյուր քաղաքացի սիրում է իր երկիրը և վստահաբար պատրաստ է աջակցել նրա շենացմանը նպաստող բոլոր լավ նախաձեռնություններին: Իշխանությունները մեզանում քննադատվել են մշտապես, ու քննադատությունը շարունակվելու է: Եվ դա բնական է: Ակնհայտ է, որ քննադատությունն իրականում պայմանավորված է ավելի լավ, ավելի շեն Հայաստան տեսնելու ցանկությամբ՝ հիմքում ունենալով սերն առ Հայրենիք:

Յուրաքանչյուրիս երազած Հայաստանը կարող է տարբեր լինել. մեկիս համար գլխավորը զավակների ապահով մանկությունն ու ծնողների արժանապատիվ ծերությունն է, մյուսի համար՝ ապահով սահմաններն ու դրանց անառիկությունն ապահովող զինվորի անվտանգությունը, երրորդի համար՝ իրավահավասարությունն ու սոցիալական արդարությունը, արդար տնտեսական համակարգը և աշխատանքի ու արժանապատիվ վաստակի հնարավորությունը: Մեկ բան, սակայն, պարզ է՝ մենք բոլորս երազում ենք ապրել շատ ավելի լավ Հայաստանում: Մեր նպատակն է ունենալ ապահով Հայրենիք, որի կայունության, անվտանգության և զարգացման կարևորագույն հենքը ապահովված ընտանիքն է:

Աշխարհն արագ է փոփոխվում և լի է տարաբնույթ մարտահրավերներով՝ արյունալի ներքին բախումներով, եղբայրասպան ու ազգամիջյան հակամարտություններով, միջազգային ահաբեկչական խմբերի սպառնալիքներով և այլն: Մեր տարածաշրջանը ևս զերծ չէ այս

սպառնալիքներից ու մարտահրավերներից: Ուստի, մենք իրավունք չունենք հապաղելու և հետ մնալու խաղաղությանն ու կայունությանը միտված համաշխարհային զարգացումներից:

Մեզ անհրաժեշտ է ունենալ առողջ և հեռուն տանող նպատակադրում, որը թույլ կտա դիմակայել արդի մարտահրավերներին ու շարժվել առաջ՝ ապահովելով արժանապատիվ ու բարեկեցիկ կյանք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու, ընտանիքի համար: Նման նպատակադրումն է ամրապնդում մեր այն համոզմունքը, որ մեր երկիրը լինելու է մրցունակ՝ օժտված հայակենտրոն ձգողականությամբ: Միասին մենք կարողանալու ենք կայացնել Հայրենիք, որը մրցունակ կլինի նաև իր քաղաքացիներին բավարար բարեկեցություն ապահովելու հարցում, անիմաստ կդարձնի օտար ավերում վաստակելու որևէ ցանկություն և արժանապատվորեն կկանչի իր զավակներին՝ վերադարձե՛ք **ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ**: Մեզ միավորում է այն գաղափարը, որ Հայաստանը կարող է լինել շատ ավելի լավը, շատ ավելի արդար, շատ ավելի ազատ և շատ ավելի բարեկեցիկ: Այլընտրանք չունենք, ուղղակի պետք է շարունակենք կառուցել այդ Հայաստանը:

Մենք պետականաշինության ճանապարհի կարևորագույն հատված ենք անցել, շատ քայլեր արդեն իսկ արված են: Անկախության 22 տարիների ընթացքում կարողացել ենք լրջագույն հաջողություններ արձանագրել, որոնք հնարավորություն են ընձեռում ընթանալու զարգացման անշրջելի ճանապարհով:

Այսօր ունենք կայացած և մարտունակ բանակ, որն ապահովում է մեր Հայրենիքի անվտանգությունը, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման բավական հասուն ինստիտուտներ, վերելք ապրող քաղաքացիական հասարակություն և մամուլ, որն իր ազատության աստիճանով առաջ է շատ ու շատ երկրներից, այդ թվում նաև ավելի զարգացած և ժողովրդավարության ավելի երկար պատմություն ունեցող երկրներից: Հազարամյակների փորձություն անցած ամուր հայ ընտանիքը մեր կարևորագույն արժեքն է: Ապահով Հայրենիք և ապահովված ընտանիքներ՝ սրանք անհրաժեշտ նախադրյալներն են՝ կյանքի կոչելու **ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ** նպատակադրումը:

Վստահեցնում եմ՝ 2018 թվականին մենք ապրելու ենք շատ ավելի լավ Հայաստանում: Հաստատուն քայլերով ենք գնալու այդ ճանապարհով, **ԴԵՊԻ ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ** տանող ճանապարհով:

ԱՊԱՀՈՎ ՀԱՅՐԵՆԻՔ

Մենք ապրում ենք մի տարածաշրջանում, որը խարխալում է ատելության հետևողական սերմանման ու պատերազմի հռետորաբանության սարդոստայնում, և որտեղ կան բազում սպառնալիքներ ու վտանգներ: Որոշ երկրներ առանձին դեպքերում նույնիսկ կասկածի տակ են առնում հայերի՝ իրենց պատմական հողում ապրելու իրավունքը: Մեր տարածաշրջանում մեծ է զինված բախումների հավանականությունը: Սպառազինության մրցավազքը և ապաշրջափակումը տարածաշրջանի կայունության ու անվտանգության գլխավոր մարտահրավերներն են և շարունակելու են ձևավորել հիմնական քաղաքական օրակարգը: Բաժանարար գծերը, այլատյացությունը և հակամարտություններն ուժի կամ ուժի սպառնալիքի ու բռնի միջոցներով լուծելու որոշ հարևանների նկրտումները իրական սպառնալիք են տարածաշրջանի ժողովուրդների խաղաղ ապագայի համար և շարունակելու են մերժված մնալ: Հայաստանի մեկուսացմանը միտված տարածաշրջանային ծրագրերը չեն կարող նպաստել տարածաշրջանի կայունության, անվտանգության և զարգացման ապահովմանը: Մենք շարունակելու ենք մեր ծանրակշիռ ներդրումն ունենալ տարածաշրջանում փոխվստահության ապահովման գործում:

Ոչ մի ժողովուրդ և ոչ մի ազգ հայ ժողովրդի կողմից չի ընկալվում որպես թշնամի: Նույն կերպ հայ ժողովուրդը պահանջել և պահանջելու է, որ հարևան երկու երկրների իշխանությունները դադարեցնեն հայ ժողովրդի գոյությունը, ինքնիշխանությունը, կայուն ու անվտանգ զարգացման իրավունքը մերժող ու սեփական հասարակությանը դեպի բռնություն և այլատյացություն մղող քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանը միտված մեր գործողություններն ուղղվելու են առաջին հերթին ազգային անվտանգությանը սպառնացող առկա և հնարավոր ռազմաքաղաքական սպառնալիքների բացահայտմանն ու չեզոքացմանը, մեր ազգային բանակի մարտունակության շարունակական բարձրացմանն ու սպառազինմանը:

Շարունակելու են հետևողականորեն ընդլայնվել անվտանգության ապահովման շրջանակները՝ ուղղված քաղաքացու, ընտանիքի, ազգի և պետության անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Արժևորելով անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը՝ նրա կանոնադրությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների և նպատակների իրականացումը շարունակելու է մնալ առաջնային: Հայաստանը հետևողականորեն իր ներդրումն է բերելու ՀԱՊԿ հետագա ամրապնդման գործում:

Միաժամանակ շարունակելու են խորանալ գործընկերային հարաբերությունները Հյուսիսատլանտյան դաշինքի հետ՝ հետապնդելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության բարձրացման, զինված ուժեր - հասարակություն համագործակցության խորացման, պաշտպանական համակարգի շարունակական բարեփոխման նպատակներ:

ԱՊԱՀՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԹԻՎ ՄԵԿ ԳՐԱՎԱԿԱՆԸ. ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ

Հարավային Կովկասում խաղաղության պահպանումն ու մեր պետության նկատմամբ ռազմական արկածախնդրության կասեցումը կախված են մեր պաշտպանական ներուժի ճիշտ և նպատակասլաց զարգացումից՝ արհեստավարժության, կարգապահության, կազմակերպվածության, թափանցիկության և վերահսկելիության արդիական չափանիշներին համապատասխան: Անվտանգության համակարգերի բարեփոխման շարունակականությունն ու ժամանակակից պահանջներին համապատասխանեցումը, արտաքին մարտահրավերների կանխարգելմանն ու համարժեք պատասխանի ապահովմանն ուղղված քայլերը ներառելու են քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական, անհրաժեշտության դեպքում՝ ռազմական և այլ համալիր միջոցառումներ:

Շարունակելու ենք ամրապնդել զինվորական պարտադիր ծառայության ինստիտուտի հանդեպ վստահությունը՝ անվտանգության, սոցիալական և կրթական պայմանների հետևողական բարելավման միջոցով: Պետությունը ժամկետային զինծառայությունից զորացրվողների համար ապահովելու է աշխատանքի և արտոնյալ ուսման հնարավորություններ: Անվտանգության ընդգրկուն միջոցառումները նպատակաուղղված են լինելու տնտեսական, սոցիալական, գիտակրթական, միջազգային համագործակցության, հոգևոր, տեղեկատվական և առհասարակ անվտանգությանն առնչվող այլ ոլորտների զարգացման ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակը և մեր երկրի առջև ծառացած մարտահրավերները պահանջում են ունենալ մարտունակ, մշտապես կատարելագործվող, ռազմական գիտության արդի ձեռքբերումներն արդյունավետ կիրառող

զինված ուժեր, որոնց հետագա կատարելագործման և ամրապնդման համար առաջիկա 5 տարվա ընթացքում հասնելու ենք նրան, որ՝

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերը չգբաղվեն հյուժող ու պասիվ պաշտպանությամբ, քանի որ ունակ լինեն իրենց շարժունակությամբ և մարտունակությամբ անվտանգություն սփռել մեր տարածաշրջանում և անդին, որի հիմքն արդեն իսկ դրված է աշխարհի տարբեր ծագերում մեր խաղաղապահների կողմից մարտական խնդիրների գերազանց կատարմամբ,
- շարունակվի Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համալրումը ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, այդ թվում՝ հայրենական արտադրության: Առաջնահերթությունը տրվելու է բազմաֆունկցիոնալ համալիրներին, որոնք կլինեն հետախուզության, դիտարկման, հայտնաբերման, թիրախորոշման և խոցման միասնական համակարգեր: Այս ամենում իր կարևորագույն դերն է ունենալու ժամանակակից և կենսունակ հայրենական ռազմարդյունաբերական համալիրը, որի մշտական արդիականացումը լինելու է պետության ուշադրության կենտրոնում,
- անկարգությունն ու ծառայակիցների ահաբեկումը տեղ չունենան Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: Զինված ուժերի անձնակազմը լինելու է առավել կրթված ու արհեստավարժ: Կարգապահությունը հիմնված է լինելու զինծառայողների միջև փոխադարձ հարգանքի և Հայրենիքի պաշտպանության գործում ներդրում կատարելու գիտակցումով հրամանների անվերապահ կատարման վրա: Այս ամենում օրինակելիության կատարյալ տիպար են լինելու հրամանատարները՝ ղեկավարելով անձնական օրինակով,
- կոռուպցիան վանվի զինված ուժերից, և բանակի անձնակազմը վերջնականապես ձերբազատվի առօրյա սոցիալական խնդիրներից՝ հիմնական ուժերը կենտրոնացնելով մարտունակության և սեփական գիտելիքների շարունակական բարձրացման վրա,
- շարունակվի բանակ-հասարակություն կապերի ամրապնդման գործը, որի արդյունքում ավելի բարձրանա զինված ուժերի թափանցիկության և քաղաքացիական վերահսկողության մակարդակը: Այս ամենի հիմքում դրվելու է «զինվորական համագգեստով քաղաքացու» գաղափարը. նրա, ով պետության անվտանգության գործում համարժեք պարտավորություններ ունենալուց բացի, օգտվում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով յուրաքանչյուր քաղաքացուն վերապահված իրավունքներից,

- մեծ տեղ հատկացվի բանակը գրագետ մասնագետներով համալրելու գործին, որտեղ իր կարևոր դերն է խաղում Հայաստանում մրցունակ և որակյալ ռազմական կրթահամակարգի վերջնական կայացումը: Ռազմակրթական բարեփոխումներում առաջադեմ լավագույն չափորոշիչների ներմուծմամբ ստեղծվելու է Հայաստանի կարիքներին համապատասխանող ուրույն ռազմակրթական համակարգ, որն ունակ է լինելու փակ շրջափուլով ապահովել բոլոր կատեգորիաների սպայական ու սերժանտական կադրերի պատրաստման մեր կարիքները:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայաստանի ներգրավումը միջազգային հարաբերություններում այսօր ավելի ընդգրկուն է և դինամիկ, քան երբևէ: Զարգանում է մեր բազմակողմ և երկկողմ միջազգային համագործակցությունը: Կայունանում են մեր միջազգային գործունեության իրավական հիմքերը: Հայաստանը հարաբերություններ է զարգացնում աշխարհի բոլոր առաջատար պետությունների և ուժային կենտրոնների հետ: Ավելի ու ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում պետության շահերը ներկայացնելու, մեր քաղաքացիների իրավունքները պաշտպանելու և մեր հայրենակիցների ներգրավումն ապահովելու համար:

Մեր մշտական ուշադրության կենտրոնում են լինելու՝

- անվտանգության արտաքին բաղադրիչների ամրապնդումը,
- արցախյան հիմնախնդրի արդար և խաղաղ կարգավորումը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա,
- Հայաստանի միջազգային քաղաքական և տնտեսական ներգրավվածության ընդլայնումը,
- համազգային նշանակություն ունեցող խնդիրներին հետամուտ լինելը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դրա հետևանքների վերացման գործընթացին նոր թափ հաղորդելը,
- հայկական մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված քայլերը,
- Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի դաշնակցային, ռազմավարական գործընկերության զորացումը,
- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության զարգացումը և ընդլայնումը,

- Եվրամիության հետ մերձեցման քաղաքականության շարունակումը, եվրոպական պետությունների հետ հարաբերությունների առավել ամրապնդումը,
- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների շարունակական զարգացումը,
- Հայաստան-Թուրքիա հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորման քաղաքական ուղեգծի շարունակումը,
- համագործակցության ընդլայնումը Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և այլ բարեկամ պետությունների հետ,
- ԱՊՀ տարածքում ինտեգրացիոն գործընթացներին ակտիվ մասնակցության շարունակումը, ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի և գործակցության խորացումը,
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում Հայաստանի մասնակցության ընդլայնումը և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների խորացումը,
- արաբական աշխարհի հետ պատմականորեն ձևավորված բարեկամական կապերի և ավանդական գործընկերային հարաբերությունների շարունակականության ապահովումը:

Մենք շարունակելու ենք մեր ավանդը ներդնել և նպաստել միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող ու մեր շահերին համահունչ բոլոր նախաձեռնությունների իրականացմանը՝ նախևառաջ օգտագործելով միջազգային կառույցներին Հայաստանի անդամակցությամբ ընձեռվող հնարավորությունները: Մենք հավատարիմ ենք մնալու մեր կողմից որդեգրված գործընկերության և համագործակցության ոգուն: Հայաստանն արտաքին աշխարհի համար շարունակելու է մնալ վստահելի և կանխատեսելի գործընկեր:

Առավել մեծ ուշադրություն ենք կենտրոնացնելու այն խնդիրներին, որոնք ապահովելու են ՀՀ քաղաքացիների պաշտպանվածությունն աշխարհի բոլոր երկրներում:

Ուշադրության կենտրոնում են մնալու արտաքին աշխարհին կապող տրանսպորտային ուղիների բազմազանեցման, էներգակիրների տեղափոխման միջոցների անխափան գործարկման, արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովման, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնման և այդ շուկաներում ներգրավվածության, արտաքին ներդրումների և նոր տեխնոլոգիաների ու հմտությունների ներմուծման

հարցերը: Այս խնդիրների լուծման գործում առավելագույն ներգրավվածություն են ունենալու մեր դեսպանատներն ու ներկայացուցչությունները:

2015 թվականն աշխարհի հայության՝ Հայաստանի, Արցախի, սփյուռքի և ամբողջ մարդկության համար պետք է դառնա Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման յուրատեսակ հանգրվան: Մենք մեր միասնական ջանքերն ենք ներդնելու ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումն էականորեն նոր հարթություն տեղափոխելու գործում՝ լինի դա միջազգային կառույցների, պետությունների, թե միջազգային հանրության (այդ թվում՝ Թուրքիայի հասարակության) մակարդակով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՈՐՈՇՈՂԸ ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ ԱՐՁԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐՆ Է

Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լուծում ստանա բացառապես խաղաղ և բանակցային ճանապարհով, միևնույն ժամանակ պատրաստ ենք վճռականորեն պատասխանել յուրաքանչյուր արկածախնդրության և ուռնձգության, որը կսպառնա մեր անվտանգությանը:

Հաշվի առնելով Ադրբեյջանի ապակառուցողական քաղաքականությունը, հայատյացությունը, ուժի կիրառման կամ ուժի սպառնալիքի մշտական իրողությունները՝ բոլոր հնարավոր միջոցներով է՛լ ավելի են մեծացվելու Լեռնային Ղարաբաղի և նրա բնակչության անվտանգության ապահովման երաշխիքները:

Երախտագիտություն հայտնելով Մինսկի խմբի համանախագահող երկրներին՝ հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ ներդրած ջանքերի համար՝ շարունակելու ենք միջնորդների ու միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել խաղաղ կարգավորումը հնարավոր դարձնող վստահության ամրապնդման միջոցների անհրաժեշտության վրա: Այս նպատակով ակտիվորեն օգտագործելու ենք նաև խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունները: Ադրբեյջանի ապակառուցողական քաղաքականությունը, մասնավորապես՝ դիպուկահարներին հետ քաշելուց և շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմի գործարկումից հրաժարվելը, մարդասպաններին հերոսացնելը, այլատյացությունը և ռասիզմը խրախուսելը, անհուսալի և բանակցություններում դրսևորվող երկերեսանի կեցվածքը ծայրաստիճան սրում են իրավիճակն ամբողջ տարածաշրջանում: Բնական և բանական կլինի, որ Արցախն օր առաջ զբաղեցնի իր տեղը բանակցությունների

սեղանի շուրջ, ուստի մեր ջանքերն ուղղելու ենք այդ հարցի շուտափույթ լուծմանը: Արդյունավետ բանակցությունների վարումը կառուցողական մթնոլորտում հնարավոր կլինի սոսկ այն դեպքում, երբ հակամարտության կողմերն իրապես ցանկանան հասնել խնդրի արդար լուծման՝ հրաժարվելով անհիմն առավելապաշտական նկրտումներից:

Միջազգային գործընթացների համատեքստում այսօր ականատես ենք ինքնորոշման իրավունքի իրացման վառ օրինակների, որոնք չեն հանգեցնում պատերազմների կամ ուժային ճնշումների: Արցախը եվրոպական ընտանիքի մասն է: Եվ մենք միշտ եղել և շարունակում ենք մնալ ղարաբաղյան համակարտության խաղաղ կարգավորման կողմնակից:

Լրացուցիչ ջանքեր ենք գործադրելու Արցախի և միջազգային հանրության շփումները սերտացնելու համար: Պետք է հզորանան սերտ կապերն ու միասնական օրակարգի ներքո գործունեությունը Հայաստանի Հանրապետության, Արցախի և սփյուռքի միջև:

Համատեղ ջանքերով մեր նպաստն ենք բերելու ազատ, անկախ, ժողովրդավարական Արցախի զարգացմանը:

ԴԵՊԻ ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՍՓՅՈՒՌԻ ՄԵՐ ՔՈՒՅՐԵՐԻ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀԵՏ

Վերջին տարիների ընթացքում սփյուռքի հետ գործակցությունը բարձրացվեց նոր մակարդակի: Մեր համատեղ ներուժը, համայն հայության համախմբվածության ու համագործակցության հարյուրավոր օրինակները բազմապատկել են մեր մրցակցային առավելությունները: Միաժամանակ, առկա արդյունքները չեն արտացոլում մեր հավաքական հնարավորությունների ողջ բազմազանությունն ու խորությունը:

Հայաստան-սփյուռք գործակցությունը դինամիկ զարգանում է: Շարունակում են կարևոր նշանակություն ունենալ սփյուռքի կառույցների հետ համատեղ ռազմավարական ծրագրերի իրականացումը, Հայաստան-սփյուռք փոխգործակցության համար նպաստավոր պայմանների ապահովումը, փոխներգրավման գործուն մեխանիզմների ստեղծումը, երկքաղաքացիության ինստիտուտի հետագա զարգացումը:

Առաջիկա տարիներին կմշակվեն համագործակցության նոր ձևաչափեր: Առաջնային են համարվելու սփյուռքահայ երիտասարդներին կրթության նպատակով տրամադրվող կրթաթոշակների նպատակաուղղված ավելացումը, սփյուռքի կրթօջախների հետ փոխգործակցության ծրագրերի ընդլայնումը, հայագիտության ոլորտում համատեղ գիտական

հետազոտությունների իրականացումը: Աշխարհասփյուռ հայության հետ իրականացված համատեղ ծրագրերի արդյունքներն առավել շոշափելի կդառնան մոտ ապագայում:

Հայաստան վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում սիրիահայերի համար, պետք է ստեղծենք բոլոր հնարավոր պայմանները Հայրենիքում նրանց ինտեգրումն արագացնելու նպատակով:

ԱՊԱՀՈՎ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄԻԱՅՆ ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Արդար պետություն» նշանակում է քաղաքացիների հետ կարևոր հարցերը քննարկելու և արդարացի որոշումներ ընդունելու կարողություն: Արդար պետությունը պարտավոր է բոլորի համար երաշխավորել հնարավորությունների հավասարություն թե՛ քաղաքական ասպարեզում, թե՛ տնտեսության մեջ, թե՛ մշակութային կյանքում, պետք է ապահովի և խթանի մրցակցությունը՝ մինևույն ժամանակ արդյունավետ միջոցներով պաշտպանելով առավել խոցելի սոցիալական խմբերին, պետք է նպատակային և հետևողական գործողություններով կանխի կոռուպցիան:

Արդարությունը հիմնվում է իրավունքի գերակայության, մարդուն, նրա իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք ճանաչելու գաղափարի վրա՝ դրանից բխող հետևանքներով: Արդարության ապահովումը, լինելով բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրը, այնուհանդերձ, դատարանների հիմնական գործառույթն է:

Այս առումով շարունակելու ենք իրականացնել հիմնավոր, արմատական բարեփոխումներ, որոնք կարճ ժամանակում մեր քաղաքացիների համար կապահովեն արդարադատության մատչելիություն, դրա իրական անկախություն ու արդյունավետություն:

Դատարանները, իրապես պաշտպանելով քաղաքացիների իրավունքները, կարող են դառնալ այդ ուղղությամբ մյուս մարմինների գործողությունների խթանիչ: Միայն այդ դեպքում կարող է ապահովվել վստահությունն արդարադատության և դատարանի հանդեպ:

Կարևորվելու են մարդու իրավունքների պաշտպանությունը վարչական մարմիններում, վարչական վարույթի շրջանակներում, քաղաքացիների՝ լսված լինելու իրավունքի երաշխավորումը, մարդկանց հանդեպ բարյացակամության միջավայրի ստեղծումը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը պետք է համապատասխանի իր կոչմանը և ապահովի իրավունքների պաշտպանությունը

ոտնձգություններից, քաղաքացիների անվտանգությունն ու ազատությունը պետք է առաջնահերթություն դառնան, պետական մարմինների գործունեությունը պետք է նպաստի սոցիալական արդարության և հասարակական համերաշխության հաստատմանը:

Էապես կվերանայվի քրեական արդարադատության ամբողջ փիլիսոփայությունը: Քաղաքացիները կստանան քրեական գործերով իրենց իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու նոր հնարավորություններ, իսկ իրավապահ մարմիններին կտրվեն հանցավորության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու ժամանակակից իրավական գործիքներ:

ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Դարեր ի վեր մեր ժողովրդի բաղձալի երազանքն են եղել ազատությունը և անկախ Հայրենիք ունենալը:

Հայաստանում բազմակարծությանը, քաղաքական ազատություններին, խոսքի ազատությանը, ժողովրդավարությանն այլընտրանք չկա: Սա կարևոր սկզբունք է, որի պահպանման և զարգացման համար մենք դեռևս անելիք ունենք:

Հանդուրժողականությունը մեր երկրում առկա քաղաքական գործընթացների հենասյունն է: Հասունացած խնդիրների լուծման գործում պետք է բացառենք խտրականության, այլակարծության ճնշման և այլ անհարգալից մոտեցումները: Կառուցողական և պատասխանատու քննադատությունը, քաղաքացիական վերահսկողության ինստիտուտների անկաշկանդ գործունեությունն առողջ քաղաքական համակարգի զարգացման և ժողովրդավարական պետությանը բնորոշ իշխանությունների տարանջատման ու հակակշռման սկզբունքով ձևավորված պետական կառավարման համակարգի արդյունավետության գրավականն են:

Քաղաքական այլակարծության վրա խարսխված՝ քաղաքական միավորների կառուցողական երկխոսությունն ապահով Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման կարևոր բաղադրիչն է: Նախորդ տարիների ընթացքում մենք կամուրջների գցման քաղաքականություն ենք իրականացրել, և այս սկզբունքը շարունակելու է մնալ մեր օրակարգում: Ազգային և սոցիալական համերաշխության սկզբունքն այլընտրանք չունի:

Միայն գաղափարական և գաղափարախոսական առողջ մրցակցությունն է ժողովրդավարական ավանդույթների ձևավորման և քաղաքական համակարգի համընթաց զարգացման կայուն երաշխիքը: Մեր գործունեության հիմքում կրելով ազգային և ժողովրդավարական արժեքներ՝ մենք կարևորում ենք նաև սփյուռքի մեր գործընկերների՝ ավանդական կուսակցությունների հետ կայուն հարաբերությունները, որոնք միտված են ամրապնդելու Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը և բարենպաստ պայմաններ են ստեղծում «Ապահով Հայաստան» նպատակադրումն իրականացնելու համար:

Հայաստանում բազմակարծության, քաղաքական ազատությունների, խոսքի, մամուլի, խղճի ազատության լիարժեք կենսագործումն այլընտրանք չունի: Այս ուղղություններով մենք միասին մեծ աշխատանք ենք կատարել, բայց դեռևս շատ բան ունենք անելու:

Կայուն և առողջ քաղաքական համակարգը ենթադրում է նաև անընդհատ աջակցություն քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանն ու զարգացմանը:

Մենք վճռական ենք՝ հասնելու այնպիսի իրականության, երբ Հայաստանում ցանկացած քաղաքացի վստահ կլինի, որ իր ձայնը լսելի է, իր քննադատությունը՝ ուշադրության ու հարգանքի արժանացող: Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացումն այլևս փաստ է: Քաղաքացիների ոչ ֆորմալ միավորումները՝ իրենց հուզող խնդիրները լուծելու նպատակով, դարձել են իշխանությունների որոշումների վրա ազդող և յուրօրինակ հավասարակշռող գործոն: Մենք շարունակելու ենք առաջ գնալ այս ճանապարհով:

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՎԱՍՏԱԿ

Հայաստանի տնտեսական զարգացումն առաջնորդվելու է բարձր արտադրողականության և տեխնոլոգիական նոր որակ կրող արդյունաբերության ձևավորման, արտաքին շուկաներում տեղական արտադրողի և արտահանողի համար բարենպաստ ռեժիմների երաշխավորման, երկրի ներսում ազատ տնտեսական գոտիների կայացման, արդյունավետ արտաքին ներդրումների ներգրավման ու գործարար միջավայրի համակարգային բարելավման քաղաքականությամբ:

Այսուհետ խելամիտ շուկայական կարգավորումը փոխլրացնելու ենք իրական հատվածում պետության արդյունավետ միջամտությամբ՝ առաջին անգամ ակտիվ տնտեսական քաղաքականությունը դարձնելով զարգացումն ուղղորդող հիմնական գործելաոճ:

Զարգացման քաղաքականության հիմնական նպատակն է լինելու միջին և բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի ստեղծումն ու տնտեսությունում արտադրողականության բարձրացումը:

Արդյունաբերական քաղաքականությունը մտնում է ակտիվ իրագործման փուլ: Երկրի արդյունաբերական համակարգի ձևավորման առանցքը կազմելու են մրցունակ տեխնոլոգիաներ կիրառող ու նորարարական արդյունք ստեղծող ոլորտները:

Այս նպատակին հասնելու համար կարևորում ենք արտադրության և իրացման գլոբալ արժեշղթայում Հայաստանի դերի մեծացմանը նպաստող համարձակ նախագծերի իրականացումը: Հեղինակավոր ընկերությունների ներգրավում, ազատ տնտեսական գոտիների արդյունավետ գործարկում, միջազգային շուկայում հայկական ծագում ունեցող ապրանքների հեղինակության ու ճանաչելիության բարձրացման միջոցառումներ. սրանք են լինելու երկրի տնտեսությունը՝ արտահանմանն ուղղված զարգացմանը տանող առաջնային գործիքները: Այս բոլոր գործընթացներում առաջնորդվելու ենք մեր որդեգրած սկզբունքով՝ ծրագրերի ու նախագծերի իրականացման բոլոր փուլերում մասնավոր հատվածին դիտելով որպես գործընկեր:

Այս միջոցառումների և նախաձեռնությունների նպատակն է նոր՝ ապահով աշխատատեղերի ստեղծումը:

Բարձր արտադրողական և միջազգայնորեն մրցունակ տնտեսության կառուցման գրավականներից է լինելու միջազգային տնտեսական ինտեգրացման խորացմանը նպաստող մեխանիզմների լիարժեք կիրառումը: Այս գործում ընդգծված նշանակություն է ունենալու գոյություն ունեցող ազատ առևտրային մեխանիզմներից օգտվելը և ինտեգրացիոն տարբեր գործընթացներին ակտիվ մասնակցությունը. գործողություններ, որոնք թույլ կտան հայրենական արտադրողին առավել նպաստավոր և ազատ մուտք ունենալ հնարավորինս շատ շուկաներ: Գործընթացների դրական ազդեցությունների երաշխավորման համար առաջնային են լինելու տնտեսությունում ստեղծվող որակի վերահսկման համակարգի արմատական վերափոխմանն ուղղված քայլերը:

Բիզնեսի համար հարմարավետ միջավայր ստեղծելու մեր ջանքերը լինելու են շարունակական ու հետևողական: Տեղական և օտարերկրյա գործարարի ու ներդրողի համար Հայաստանը վերաճելու է գործարարությամբ զբաղվելու տեսանկյունից ապահով, կայուն և օրենքի գերակայությամբ բնորոշվող միջավայրի: Արդյունքը լինելու է առարկայական, տեսանելի և շոշափելի՝ երկիրը գործարար միջավայրի դյուրինության տեսակետից ընդգրկելով աշխարհի առաջատար երկրների շարքում: Հետևողականորեն զարգանալու և արդիականացվելու են հարկային ու մաքսային համակարգերը, էական է դառնալու արդար դատական համակարգի դերը տնտեսական հարցերում:

Տնտեսության առաջընթացը մեծապես պայմանավորված է լինելու ձեռնարկատիրական գործունեության ակտիվացմամբ, որն արդյունավետ զարգացման կարևորագույն պայման է: Այս նպատակով պետական աջակցության նշանակետը փոքր և միջին ձեռնարկությունների շրջանում նորարարությունների ներդրման խրախուսումն է, բիզնես-կրթության մշակույթի արմատավորումը, ֆինանսական ռեսուրսների մատչելիության բարձրացումը, կանանց ձեռներեցության խրախուսումը, միջազգային շուկայում ընկերությունների դիրքավորումը և հարկային դաշտի ու վարչարարության պարզեցումը: Առանձնահատուկ աջակցություն է ցուցաբերվելու նոր բիզնես հիմնելու նախաձեռնություններին:

Շարունակելու ենք նորարարական համակարգի կայացման աշխատանքները՝ զուգահեռաբար ներդնելով տնտեսության մեջ դրանց համատարած կիրառման արդյունավետ աջակցության մեխանիզմներ:

Տնտեսության զարգացմանը և արտաքին աշխարհի համար նոր ու ինքնատիպ դիմագիծ ունեցող Հայաստանի բացահայտմանն ու ճանաչմանը նպաստելու է զբոսաշրջային քաղաքականությունը:

Զարգացման հենասյուները դրվելու են ուղղորդված ներդրումային քաղաքականությամբ՝ որպես առաջադեմ տեխնոլոգիաների փոխանցման և արտահանման հնարավորությունների ընդլայնման կարևոր մեխանիզմ:

Քաղաքականության այս շեշտադրումներով ենք ապահովելու տնտեսական զարգացման այնպիսի փոխակերպումը, որի արդյունքում Հայաստանի քաղաքացին ստեղծելու է բարձրարժեք և մրցունակ ապրանք ու ծառայություն, ունենալու է երաշխավորված աշխատանք իր երկրում ու բավարար ճկունություն՝ աշխատաշուկայում իր գիտելիքն ու կարողությունն անկաշկանդ իրացնելու համար, սպառողական պահանջարկը բավարարելիս ընտրության շարժառիթ է դառնալու որակը: Եվ, որ ամենակարևորն է, յուրաքանչյուր հայաստանցի իրական երաշխիք է ունենալու, որ իր երեխաներն ապրելու են առաջադեմ ու ապահով Հայաստանում:

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԳՅՈՒՂ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկումը մենք հայտարարել ենք որպես իրականացվող քաղաքականության առանցքային փոփոխություն: Մենք պարտավոր ենք, բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղում զուգահեռաբար ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ: Չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի:

Գյուղատնտեսությամբ զբաղվելը գրավիչ և շահավետ դարձնելու նպատակով շարունակելու ենք ոլորտում կատարվող ներդրումներն ու աջակցությունները՝ մատչելի վարկավորում, պարարտանյութեր, դիզվառելիք, սերմացու և այլն: Շարունակվելու է գյուղատնտեսական տեխնիկայի ու տեխնոլոգիաների արդիականացման գործընթացը: Մատչելի ֆինանսավորման և սպասարկման ճկուն մեխանիզմների կիրառման արդյունքում գյուղացու համար ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերումը դառնալու է ձեռնտու:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության և ապրանքայնության մակարդակի բարձրացման, եկամտաբերության ավելացման նպատակով քայլեր ենք ձեռնարկելու գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման ուղղությամբ: Կարևորություն է

տրվելու չօգտագործվող վարելահողերի գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավման և ոռոգվող հողատարածքների ընդարձակման խնդիրներին: Հետևողական աշխատանք է տարվելու հեռագնա արոտավայրերը ակտիվ շրջանառության մեջ ներգրավելու ուղղությամբ:

Ամեն կերպ խթանելու ենք բարձր ավելացված արժեք ապահովող ճյուղերի՝ խաղողագործության և պտղաբուծության զարգացումը: Ֆինանսական զգալի ներդրումներ են կատարվելու ժամանակակից տեխնոլոգիաներով պտղատու այգիների հիմնադրման և այգեգործության արժեշղթայի զարգացման ուղղությամբ:

Մշտական ուշադրության կենտրոնում են գտնվելու ագրովերամշակման ոլորտի զարգացման և թարմ ու վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի արտահանման գործընթացները:

Նպաստավոր պայմաններ ենք ստեղծելու ջերմոցային տնտեսությունների զարգացման և տարածքների ավելացման համար, որի շնորհիվ կմեղմվեն բանջարեղենի հիմնական տեսակների գների սեզոնային տատանումները, ինչպես նաև շեշտակիորեն կավելանան դրանց արտահանման ծավալները և կստեղծվեն մեծ թվով նոր աշխատատեղեր:

Ձկնաբուծության ոլորտում աստիճանաբար ներդրվելու են արդի լավագույն տեխնոլոգիաները, և ստեղծվելու են ձկնամթերքի վերամշակման ժամանակակից կարողություններ՝ ապահովելով տարեկան արտադրանքի թողարկման էական աճ:

Անասնապահության ցուցանիշների էական բարելավումը կպայմանավորվի տոհմային երինջների ներկրմամբ և սելեկցիայի առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ներդնելու ենք սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխանող վերահսկիչ մեխանիզմներ, որպեսզի սպառողը համոզված լինի, որ հայկական արտադրության ցանկացած պարենամթերք անվտանգ է և բարձրորակ:

Հակակարկտային կայանների կառավարման ժամանակակից համակարգերի կիրառման միջոցով կնվազեցվեն բնակլիմայական ռիսկերը:

Գյուղում շարունակելու ենք բարձրացնել կյանքի որակը: Կենցաղը, գյուղում մատուցվող ծառայությունները պիտի իսկապես որակյալ դառնան: Գյուղական համայնքների կարողությունների ավելացման միջոցով դրանց լիովին հասանելի պետք է դառնան խմելու ջուրը, գազը, էլեկտրաէներգիան, հեռախոսակապը, համացանցը, բարձրորակ բժշկական ծառայությունները: Գյուղական ճանապարհների էական բարելավումն ու տրանսպորտային

զարգացած ցանցերի ձևավորումը գյուղացու համար կավելացնեն նրա կարիքների բավարարման հնարավորությունները:

ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՐԿՐԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Տարածքների համաչափ զարգացումը շարունակելու է մեր քաղաքական օրակարգում առաջնահերթություն մնալ:

Շարունակելու ենք Երևանի «բեռնաթափման» համալիր ծրագիրը՝ պետական, նաև կրթական, մշակութային և տնտեսական առանձին գործառույթներ բաշխելով հանրապետության այլ տարածքներում, ինչպես նաև բարձրացնելով քաղաքների դերը հանրային գործընթացներում:

Շարունակելու ենք ներդնել արդյունավետ սեփականատիրության լավագույն նորմերը՝ մեր ազգային հարստության և հատկապես հողի լիարժեք օգտագործումն ապահովելու նպատակով:

Ապահովելու ենք համապատասխանությունը տեղական իշխանությունների իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև՝ հետևողականորեն ավելացնելով համայնքների ինքնակազմակերպման հնարավորությունները:

Համայնքներում հետևողականորեն ավելացնելու ենք ծառայությունների տեսականին՝ միաժամանակ բարձրացնելով դրանց որակը: Համատիրությունների կայացման նպատակով իրագործելու ենք հեռագնա հատուկ ծրագրեր, պետական օժանդակությամբ կիրառելու ենք նոր մեխանիզմներ:

Հարկային քաղաքականությամբ ուղղորդելու ենք ներդրումները դեպի համայնքներ՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Բարձրացնելու ենք ներկայացուցչական մարմինների դերը: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների և նրա գործունեության նկատմամբ սահմանելու ենք արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ:

Հասարակության կողմից վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով ավելացնելու ենք այդ մարմինների գործունեության թափանցիկությունը: Համայնքային ծառայությունների և դրանց մատուցման որակը հանրապետությունում դարձնելու ենք համադրելի:

Միջհամայնքային միավորումների ձևավորմամբ նպաստելու ենք համայնքների կարողությունների հզորացմանը և արդյունավետ կառավարմանը: Տարածքների արդյունավետ զարգացումն ապահովելու ենք համայնքային նախաձեռնությունների խրախուսման միջոցով: Սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքների համար իրականացնելու ենք հստակ օժանդակության ծրագրեր:

Ներդնելու ենք գույքահարկի արդարացի համակարգ: Ենթակառուցվածքների ոլորտում ապահովելու ենք ներդրումների առաջանցիկ տեմպը: Տարեցտարի բարելավելու և ավելացնելու ենք ջրամատակարարման տևողությունը: Ձեռնարկությունները ու բնակիչներին վերջնականապես ապահովելու ենք կայուն և անխափան, լարման տատանումներից զերծ էլեկտրաէներգիայով:

Շարունակելու ենք վարել էներգիայի վերականգնվող աղբյուրների և այլընտրանքային էներգետիկայի նպատակային զարգացմանը միտված քաղաքականություն: Ավարտելու ենք Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օղային գիծը:

Նախատեսված ժամկետներում ավարտելու ենք «Հյուսիս-հարավ» արագընթաց ճանապարհի և ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի կառուցումը:

Նոր թափ ենք հաղորդելու Երևանի ավտոճանապարհների և հանգույցների շինարարությանը, որով կթեթևանա Երևան քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը: Այլ քաղաքներում ևս ավելացնելու ենք ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման ծրագրերի իրականացման տեմպերը:

Նորացնելու և արդիականացնելու ենք հասարակական տրանսպորտը: Հիմնովին վերափոխելու ենք միջքաղաքային ու ներքաղաքային տրանսպորտի կառավարման համակարգը: Ապահովելու ենք մարդատար և բեռնատար փոխադրումների մրցունակ գների մակարդակ:

Հանրապետության ողջ տարածքում ապահովելու ենք բնակչության գերակշիռ մեծամասնության կողմից համակարգիչների և համացանցի օգտագործման հնարավորությունը:

ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Մենք վերանայել ենք մեր մոտեցումն աղքատության հաղթահարման խնդրի նկատմամբ. սոսկ նպաստներով և սոցվճարներով այս խնդիրը չի լուծվի, մենք պետք է վերացնենք աղքատությունը ծնող պատճառները:

Յուրաքանչյուր ընտանիք պետք է կարողանա աշխատանքով ապահովել իր բարվոք կենցաղը, իսկ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքը պետք է զգա պետության իրական աջակցությունն ու օգնությունը:

Շարունակելու ենք համալիր սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը՝ որպես ապահով ընտանիքի երաշխիք:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը նշանակում է նոր որակի ծառայությունների տրամադրում, շահառուի սոցիալական վիճակի վրա ներազդելով՝ սկզբունքորեն նոր մեթոդների և մեխանիզմների կիրառում: Մասնավորապես, նախատեսվում է սոցիալական պաշտպանության ոլորտում անցում կատարել դեպի ակտիվ, նախաձեռնողական քաղաքականություն, որի շրջանակներում հետևանքների վերացմանը միտված պասիվ ծրագրերի (դրամական վճարներ, արտոնություններ) հաշվին ընդլայնվելու են սոցիալական անբավարարվածություն (սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն) ծնող պատճառների չեզոքացմանն ու կանխարգելմանը միտված ծրագրերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանխարգելումը շատ ավելի արդյունավետ և նվազ ծախսատար է: Արդյունքում սոցիալական պաշտպանության ոլորտը զուտ վերաբաշխման գործառույթ կատարելու փոխարեն նպաստելու է մարդկային կապիտալի զարգացման միջոցով տնտեսական աճի ապահովմանը:

Նշված անցումը ենթադրում է նաև շահառուին տրամադրվող սոցիալական ծառայությունների տեսակների ընտրության հիմքում դրված սկզբունքների փոխակերպում: Մասնավորապես, նշված գործընթացի հիմքում դրվելու է ոչ թե շահառուի ներկայացրած «պահանջարկը», այլ նրա կարիքը, որը կբացահայտվի առկա իրավիճակի համապարփակ վերլուծության արդյունքում:

Համալիր սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման շրջանակներում կվերափմաստավորվեն նաև սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում:

Ծախսային առաջնահերթություն են լինելու կենսաթոշակների չափերի շարունակական բարձրացումները՝ որպես նշանակետ ընտրելով ցածր եկամուտներ ստացող կենսաթոշակառուներին: Նույնիսկ ամենացածր կենսաթոշակը պետք է բավարարի կենսաթոշակառուի կենսական պահանջմունքները: Կուտակային համակարգի ներդրմամբ կենսաթոշակային ապահովության խնդիրը կստանա հիմնարար լուծում:

Յուրաքանչյուր ընտանիք պետք է զգա պետության հոգածությունը:

Հաշմանդամ անձանց համար պետք է ստեղծվեն առնվազն նվազագույն պայմաններ՝ հասարակության մեջ նրանց ներառումն ապահովելու (ամբողջական դարձնելու) համար: Հատուկ ուշադրություն ենք դարձնելու հաշմանդամների զբաղվածության խնդիրներին:

Մի քանի տարում ավարտելու ենք զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի լուծումը, արագացնելու ենք տեմպերը նաև հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների կարիքների բավարարման ուղղությամբ:

ԱՌՈՂՋ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Առողջապահության ոլորտի բարեփոխումներն ընթացքի մեջ են, սակայն մենք դեռևս լուրջ անելիքներ ունենք այստեղ: Այստեղ մեր քաղաքականությունն ուղղված է լինելու հիվանդությունների կանխարգելմանը՝ առողջ կենսակերպի պայմաններ ստեղծելու միջոցով:

Մայրական առողջության և առողջ սերնդի դաստիարակության խնդիրները հատուկ հոգածության առարկա են դառնալու: Հայաստանում ծնավորելու ենք այնպիսի միջավայր, որտեղ մայրությունն ու մանկությունը գտնվում են հասարակության և պետության պաշտպանության ու հովանավորության ներքո: Վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունները պիտի լինեն առավելագույնս հասանելի և որակյալ Հայաստանի ողջ տարածքում: Մեր երկրի բոլոր համայնքների բնակիչները պիտի կարողանան մայրաքաղաքի բնակչի հետ հավասար օգտվել որակյալ բժշկական ծառայություններից:

Ծնելիությունը խթանելու նպատակով ներդնելու ենք մայրական կապիտալի համակարգ: Մեր ջանքերը ուղղվելու ենք ապահով Հայաստանի ընկալման ծնավորմանը, որտեղ մայրանում են իրենց մանկան ապագայի նկատմամբ ունեցած վստահությամբ:

Երրորդ և չորրորդ երեխաների ծննդյան դեպքում տրվող միանվագ նպաստի չափը պետք է լինի խրախուսական, իսկ 5-րդ և հաջորդ երեխաների ծննդյան դեպքում պետության կողմից

տրվող աջակցությունն էապես կնպաստի բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավմանը: Բազմազավակ ընտանիքները դիտարկվելու են որպես ապահով հասարակության կարևորագույն օղակ:

Պետական պատվերի շրջանակներում որոշ հիվանդությունների տեսակների և սոցիալապես անապահով խավերի համար ներդնելու ենք բժշկական ապահովագրության ինստիտուտը:

Բժիշկների պարտադիր վերապատրաստման, այդ թվում՝ աշխարհի լավագույն առողջապահական կենտրոններում համապատասխան մեխանիզմի ներդրման միջոցով ապահովվելու ենք հիվանդությունների ճշգրիտ և վաղ ախտորոշում, որակյալ բուժում, ինչպես նաև հետվիրահատական վերականգնողական շրջանի բարձրորակ իրականացում:

Շարունակելու ենք մարզային բժշկական հաստատությունների վերակառուցման և վերազինման ծրագրի իրականացումը:

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար երաշխավորելու ենք սրտի անհետաձգելի վիրահատությունը: Կառուցելու ենք միջազգային չափանիշներին համապատասխան արյունաբանության հիվանդանոց: Հիմնելու ենք ուռուցքաբանական կենտրոն, որը կընձեռի ժամանակակից գիտական մեթոդներով նորագոյացությունների հայտնաբերման, ախտորոշման և որակյալ բուժման հնարավորություն: Մենք պարտավորվել ենք Հայաստանը դարձնել առողջապահության գերազանցության տարածաշրջանային կենտրոն և չենք շեղվելու ստանձնած պարտավորությունից: Նախատեսում ենք ներդրումներ՝ բիոտեխնոլոգիաների և դեղագործության ժամանակակից արտադրություններ հիմնելու համար:

Աջակցելու և խրախուսելու ենք բուժհաստատությունների արդիականացմանը, նորագույն տեխնիկական միջոցներով հագեցմանը և բուժման գերժամանակակից տեխնոլոգիաների ներմուծմանը: Փոքր քիմիայի զարգացման ծրագրի շրջանակում պետականորեն հովանավորելու ենք եզակի դեղանյութերի և դեղամիջոցների ստեղծման, արտադրման և արտահանման գործընթացը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետությունն ընտրել է ազգային արժեքների վրա հիմնված, հարուստ հոգևոր նկարագիր ունեցող քաղաքակիրթ հասարակության կառուցման ուղին: Գլոբալացումը լուրջ մարտահրավեր է մեր ժողովրդի համար, որը մշտապես ջանքեր է գործադրել ազգային արժեքային համակարգի հիման վրա իր ինքնությունը պահպանելու համար:

Ստեղծելու ենք նպաստավոր պայմաններ հայ հոգևոր, պատմական ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների զարգացման համար:

Երաժշտության, ֆիլմերի, հեռուստահաղորդումների, գրահրատարակչության ասպարեզում պետական պատվերի տեղադրման միջոցով նպաստելու ենք ազգային և համարդկային արժեքների տարածմանը:

Ծրագրում ենք ազգային երգ ու պարի դասավանդում դպրոցներում, ինչպես նաև ազգային մշակույթի տարրերի ավելացում կրթական ծրագրերում:

Կարևորում ենք մանուկների ու պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության համակարգերի զարգացման շարունակականությունը՝ ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական ու ժամանակակից արվեստին հաղորդակցվելու, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների բացահայտման, զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների բարելավմամբ:

Ապահովելու ենք մշակութային ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը, բազմազանությունը, համաչափությունը հանրապետության ամբողջ տարածքում ազգային ինքնության պահպանման և մշակութային դրսևորման համար:

Ակտիվորեն համագործակցելու ենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետ՝ հայ ընտանիքի բարոյական նկարագրի պահպանման, մատաղ սերնդին անցանկալի ազդեցություններից զերծ պահելու և հայեցի դաստիարակություն տալու նպատակով:

Ստեղծելու ենք լրացուցիչ հնարավորություններ ազգային փոքրամասնությունների էթնիկ ինքնության պահպանման և մշակութային լիարժեք դրսևորման համար:

Ամրապնդելու ենք մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածությունը:

Մշակույթի ոլորտում ներդնելու ենք տեղեկատվական-հեռահաղորդակցական նոր տեխնոլոգիաներ:

Զարգացնելու ենք մշակութային ժամանակակից ենթակառույցներ, որոնք հնարավորություններ կստեղծեն հայ արվեստը միջազգային ասպարեզում ըստ արժանվույնս ներկայացնելու և համաշխարհային մշակութային գործընթացներում մրցունակ դարձնելու համար:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում մրցունակ պետություն նշանակում է մրցունակ կրթական համակարգ, որը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքի հաղորդումը, այլև գիտելիքի հետ աշխատելու, գիտելիք ստեղծելու ունակությունը:

Պետության կողմից երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում ենք կատարելու երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ՝ մասնագիտական) կրթություն:

Անվճար բարձրագույն կրթություն ենք ապահովելու սոցիալապես անապահով խավերի համար:

Յուրաքանչյուր առաջին դասարանցու անվճար տրամադրելու ենք համակարգիչ:

Մարզերում կառուցելու ենք նոր մանկապարտեզներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող խոցելի բոլոր խմբերի երեխաների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ընդլայնելու ենք որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունը:

Բարելավելու ենք դասագրքերի և ուսուցչական ձեռնարկների բովանդակությունը: Ներդնելու ենք կրթության արդյունքային ցուցանիշների վրա հիմնված ֆինանսավորման և արդյունավետության գնահատման գործիքներ:

Դպրոցներում ապահովելու ենք համացանցի ամբողջական և որակյալ սփռում:

Վերանայելու ենք ընդունելության քննությունների համակարգը՝ հեշտացնելով դիմորդների մուտքը բուհ, ներդնելու ենք առաջադիմության գնահատման արդյունավետ համակարգ:

Հավատարմագրման եվրոպական համակարգին միանալու միջոցով կազմակերպելու ենք Հայաստանում շնորհված կրթական որակավորումների միջազգային լիարժեք ճանաչում:

Եռապատկելու ենք հայալեզու էլեկտրոնային կրթության բովանդակության ծավալները:

Բարձրագույն տեխնոլոգիական կրթության ոլորտում, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, հիմնելու ենք ժամանակակից լաբորատորիաների ցանց:

Բուհերում ուժեղացնելու ենք գիտահետազոտական բաղադրիչը, ներդնելու ենք գիտության ֆինանսավորման ժամանակակից մեթոդներ, առաջնային ուշադրություն ենք դարձնելու հայագիտության զարգացմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

Բուհերը պետք է դառնան ժամանակակից հասարակության հենքը՝ միավորելով գիտությունը, դասավանդումը և նորարարական արտադրությունը:

Հետևողականորեն աջակցելու ենք վերջին տարիներին մեր գիտնականների գրանցած հաջողությունների հետագա խորացմանը:

Իրավական ամուր հիմք ենք ստեղծել ակադեմիական գիտության զարգացման համար: Նոր նախաձեռնություններով ենք հանդես գալու գիտնականների սոցիալական պաշտպանվածության բարձրացման ուղղությամբ:

Շարունակելու ենք տարեցտարի ավելացնել գիտությանը պետական բյուջեով հատկացվող միջոցները: Գիտական հիմնարկները ստանալու են գործունեության առավել մեծ ազատություն: Ընդլայնվելու են երիտասարդ գիտնականներին աջակցության ծրագրի ծավալները: Ստեղծվելու են նպաստավոր պայմաններ գիտական հիմնարկների և մասնավոր հատվածի առավել սերտ ու փոխշահավետ համագործակցության համար:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

Երիտասարդների խնդիրները բազմազան են և սերտորեն կապված կրթության, գիտության, զբաղվածության, առողջապահության, զինվորական ծառայության և այլ խնդիրների հետ, իսկ դրանց լուծումները ներառված են համապատասխան ոլորտների զարգացման ծրագրերում: Երիտասարդների կրթության որակի և մատչելիության խնդիրները շարունակելու ենք համարել առաջնահերթ: Ուսման մեջ առաջադիմություն ցուցաբերող և ընդունակ երիտասարդը, անկախ իր սոցիալական վիճակից, մասնագիտական կրթություն

ստանալու հնարավորություն է ունենալու: Շարունակելու ենք երիտասարդների գիտակրթական և ստեղծագործական հնարավորությունների՝ առավելագույնս արդյունավետ դրսևորմանն աջակցելուն միտված պետական երիտասարդական քաղաքականությունը:

Ապագայի նկատմամբ վստահություն ունեցող և ապահովված երիտասարդներն են ստեղծելու ամուր և առողջ ընտանիք, ինչն ազգային գենոֆոնդի պահպանման և վերարտադրության խթանման կարևորագույն գրավականն է՝ «Ապահով ընտանիք» նպատակադրման անհրաժեշտ նախադրյալը: Երիտասարդների զբաղվածության խնդիրը շարունակելու ենք դասել այնպիսի առաջնահերթությունների շարքում, որոնք լուծվելու են նոր աշխատատեղերի ստեղծման, երիտասարդների ձեռներեցության խթանման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման ճանապարհով:

Ընդլայնելու ենք երիտասարդների բնակարանային ապահովման ծրագրերի ծավալները: Սոցիալապես անապահով երիտասարդների համար մեկնարկելու է նոր սոցիալական բնակարանաշինության ծրագիրը, որը հնարավորություն կտա այդ ընտանիքներին տրամադրել ժամանակավոր պետական բնակարաններ՝ դրանք ապագայում կամ աստիճանաբար ձեռք բերելու հնարավորությամբ:

Ապահով Հայաստանի նպատակադրումն իրականացնելու գործում կարևոր դերակատարություն ունի սպորտը՝ որպես ամուր ընտանիքի ֆիզիկական և հոգևոր առողջության կարևորագույն բաղադրիչ և միջազգային ասպարեզում մեր երկրի ճանաչման հավելյալ միջոց: Սպորտի բնագավառում մեր քաղաքականության հիմնական ուղղվածությունը պետք է լինի սպորտային խմբակներում և մարզադպրոցներում ընդգրկվածության ընդլայնումը՝ դրանք հասանելի ու մատչելի դարձնելու միջոցով:

Ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացումն ապահովելու նպատակով կիրառվելու է ֆինանսավորման նոր մոդել, որի հիմքում դրվելու է պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության սկզբունքը: Վերջինիս շնորհիվ բարձրացվելու է մարզական դպրոցների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը: Վերանայվելու է սպորտային դպրոցների՝ որպես լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցող հաստատությունների կարգավիճակը, ներկայացվելու են նոր պահանջներ սպորտային կրթության նկատմամբ:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ազատ և արդար ընտրությունների անցկացումը մեզ համար առաջնային խնդիր է: Ազգային ժողովի վերջին ընտրությունների վերաբերյալ մենք հրաշալի արձագանքներ ստացանք միջազգային կառույցների և դիտորդների կողմից: Դա շատ է ոգևորում: Մենք արդեն որպես պետություն կարողանում ենք ազատ մրցակցության, արտահայտվելու գրեթե կատարյալ ազատության ու ազատ կամարտահայտության պայմաններում ընտրություններ անցկացնել և պատրաստվում ենք շատ ավելի առաջ գնալ այդ ուղիով:

Գաղտնիք չէ, որ մենք միշտ հանդես ենք եկել «հանուն» գաղափարներով, չենք գործել ընդդեմ ինչ-որ մեկի կամ ինչ-որ ուժի, պաշտպանել ենք քննարկումների և հնարավորինս լայն երկխոսության մոտեցումները, առաջարկել ենք ճանապարհ, որը տանում է դեպի Հայաստանի անվտանգության ամրապնդում, դեպի համերաշխություն և մեր ժողովրդի բարեկեցության ապահովում: Վստահաբար ապագայում ևս չենք շեղվի մեր մոտեցումներից: Դարեր ի վեր մաքառումների գնով 21-րդ դար հասած մեր ժողովուրդն Աստծո կամոք և իր կորովի շնորհիվ կրկին ազատ ու անկախ պետություն ունի և ցանկանում է հետ չմնալ զարգացած աշխարհի իրողություններից: Մենք դա՛ պետք է ապահովենք: Պետք է կարողանանք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու համար ապահով Հայրենիք կերտել և հոգալ յուրաքանչյուր ընտանիքի ապահովվածության խնդիրը: Վայրկյան անգամ չեմ կասկածում, որ կարողանալու ենք:

Հայաստանի զարգացումն է այն միակ երաշխիքը, որն ապահովելու է մեր ժողովրդի ինքնությունն ու հարատևությունը, քաղաքացիների բարեկեցությունը, մեր սահմանների պաշտպանությունը, մեր տեղն ու դերը միջազգային ասպարեզում:

Բացվող ամեն նոր օր Հայաստանում պետք է տարբերվի նախորդից՝ լինի ավելի լավը: Ապահով Հայաստանի նպատակադրումն իրագործելու ենք հենց այս՝ «ավելի լավ Հայաստանի» տրամաբանությամբ, «բարեկեցիկ, ապրելու ու գործելու համար հարմարավետ, հզոր և անառիկ Հայաստանի» տրամաբանությամբ՝ հիմքում ունենալով ապահով ընտանիքի գաղափարը:

Ապահով Հայաստանում յուրաքանչյուրս պետք է կարողանա իրականացնել իր երազանքները, կյանքի կոչել անձնական, ընտանեկան և ազգային նպատակները՝ անցյալում

թողնելով արատավոր երևույթները՝ արտոնյալների դասը, մենաշնորհներն ու ամենաթողությունը:

Պատմության ամենաբարդ ժամանակներում կարողացել ենք պահպանել մեր ինքնությունն ու ազգային արժանապատվությունը՝ հիմնվելով ամուր ընտանիքի, քրիստոնեական հավատքի և ապագայի մեր պատկերացումների վրա:

ԱՊԱՀՈՎ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԸՆՏԱՆԻՔ՝ սա է մեր զարգացման նպատակադրումը:

Ապահով Հայաստան՝ երեխաների, երիտասարդների, Հայրենիքի սահմանները անառիկ պահպանողների, աշխատավորների, մշակույթի և գիտության գործիչների, գործարարների, կանանց ու տարեցների, բոլոր-բոլորի համար:

Ապահով Հայաստան՝ տունդարձի փափագով, Հայրենիքի կարոտով ապրող հայորդիների համար:

Ապահով և բարեկեցիկ Հայաստան՝ համայն հայության իղծերի իրականացման համար, Հայաստան, որտեղ գնահատվում են մարդու վաստակն ու ավանդը, պատասխանատվությունն ու նվիրումը, որտեղ բոլորը, ինչպես կասեր Գարեգին Նժդեհը, «հավասար են օրենքի և մահվան առջև»:

Ապահով Հայաստան՝ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների, յուրաքանչյուր հայի համար: